ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2 ապրիլի 2015 թվականի N 11 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐՈՎ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ>> ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾԱԽՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ 22-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերով <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված գումարների նպատակային ծախսման համար ուսումնասիրություններ կատարելու, առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ֆելիքս Ափինյան	- Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ռոբերտ Ներսեսյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Կարինե Դովլաթբեկյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Միշա Մխիթարյան	– ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ ՏԾ հարցերով վարչության պետ

Կարեն Նազարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Գուրգեն Հարությունյան – Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ:

2. Հանձնարարել հանձնաժողովին՝ ուսումնասիրել ստացված դիմումները, առնվազն 15 օրը մեկ քննարկել մարզպետի հետ, կազմել արձանագրություն և ներկայացնել հաստատման:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տավուշի մարզպետի 2011 թվականի ապրիլի 7-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերով <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված գումարների նպատակային ծախսման համար ուսումնասիրություններ կատարելու, առաջարկություններ և եզրակացություններ տալու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 22-Ա կարգադրությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2 ապրիլի 2015թ.
ք. Իջևան